

ՀԻՌԵՈՍԻԿԱՆ**ԶԱՆԸՆԿԱՆ (ACOLYTE)**

Ջահընկալ, որուն յոյնը ακολουθός և լատինը յոյնէն առնելով acolythus կամ ceroferarius կ'ըսեն, եկեղեցւոյ չորս փոքր աստիճաններէն մին է զոր ժառանգաւորը կ'ընդունին եպիսկոպոսէ: Իրեն սպասաւորութիւնն է պատարագի ժամանակ սարկաւագին ծառայել, մոմ, խնկաման կրել և սուրբ սեղանոյն զինի և շուր պատրաստել:

Լատին եկեղեցւոյ մէջ կարգին նկատմամբ յիշատակութիւն կ'ըլլայ երրորդ դարուն Կուռնիլիոս Քահանայապետին ժամանակ. Էւսեբիոս կ'ըսէ « քառասուն և վեց երկյունք ևն, եօթն սորիսաւագունք, եօթն կիսաւարկաւագունք, քառասուն երկու ջահընկալք, երկուցնոցիք, ընդհանրոյն և դանապանք »: Արժանազրութիւն մը նարբոնայի մէջ կայ հետեւալ կերպով 445 թուականին.

VRSO PRBO. HERMETE DIA-CO. ET EOR. SEQ TIB (Urso presbytero, Hermete diacono et eorum sequentibus).

Բայց որոշակի անուամբ յիշատակուած ունինք հետեւեալ արձանագրութիւնս.

HYACINTVS ACOLITVS.

Կարեղոնի մէջ Ջահընկալը կը գտնուէին կիսաւարկաւագէն վերջը, իրենց պաշտօնն էր նիւթապէս աղքատաց և խոստովանողաց օգնութիւն տանիլ, և թղթատարը էին:

Հռովմայ մէջ Ջահընկալը նոյն իսկ բանաւորկեղոց գաղտնաբար սրբութիւն կը տանէին քսակի մը մէջ ամփոփած, ինչպէս կը պատմուի Տարկիսիոսի Ջահընկալին համար, որ Ս. Հաղորդութիւն տարած պահուն կը բռնուի, բայց աւելի յանձն կ'առնու մեռնիլ՝ քան սուրբ աւանդը յանձնել հեթանոսաց: Սիրիկիոս Քահանայապետին նամակէն գիտենք զբուած 385ին,

որ Ջահընկալը պէտք էին ըլլալ քսան տարեկան: Իննովհինտրոս Ա. (401-417) կը յիշէ Կուրիոյ՝ Տեղեկոյիս եպիսկոպոսին նամակին մէջ, որ Ջահընկալը ամէն կիրակի կը տանին նշխար պատարագին՝ քահանայից: Ս. Հերոնիմոսի խօսքէն կը հասկցուի Ջահընկալներու նկատմամբ, որ բոլոր արեւելեան եկեղեցեաց մէջ, երբ աւետարան կարգացուէր՝ իրենք կը լուցանէին ճրագները: Իսիդորոս Սիվիլացի կը յաւելու ևս, որ թէ՛ Աւետարանի և թէ՛ պատարագի մատուցման ժամանակ կը վառեն մոմերն և կը բռնեն: Հինգերորդ դարուն մէջ կայ լատին եկեղեցւոյ Ձեռնադրութեան գրոց մէջ Ջահընկալի տրուելու մասին արձանագրութիւնը Statuta Ecclesiae antiqua անուանաւ ներքև:

Հայ հին ձեռագրաց մէջ չենք գտներ աստիճանիս անունը, հնգիստասներորդ դարու մշտնոցներու մէջ փոքր աստիճանաց տուցութեան մէջ կը գտնենք Ջահընկալի աստիճանը, որ չորրորդն է եկեղեցւոյ կարգին փոքր աստիճաններու մէջ: Հ. Լըբլէրը կ'ըսէ Արեւելեան Գրիստոնեայ ազգաց մէջ հայն ունի կարգին ձեռնադրութեան արարողութիւնը, եպիսկոպոսը ձեռնադրելոյն վառուած մոմ մը կու տայ, որպէս զի յիշանութիւն ունենայ վառելու կանթիղները և լապտերը սուրբ եկեղեցիներուն մէջ. յետոյ դատարկ ժամանոց մը կու տայ և կ'ըսէ. Ա՛ռ ժամանոցս, որպէս զի ընծայես բաժակիկ գինիկ Գրիստոսի արեան համար, յանուն Հօր և Սրբոյն և Հոգոյն սրբոյ: Հայ արարողութեան մէջ եպիսկոպոսին ըրած աղօթքը Գրիգորեան ծիսարանին յարմարցուած է. կը տեսնուի աստի, որ հայը լատին արարողութենէն շատ բաներ առած են: Ձեռնադրութեան կարգը գրեթէ ամբողջապէս հռովմէականէն հայերէնի թարգմանութիւն մ'է, իբրև նմոյշ դնենք հայը լատիններէն թարգմանուած և բուն լատին ծիսարանին մէջ զբուծուածը:

Հ-յ լաթիւնէն բ-ի---

Domine Deus, Pater omnipotens et sempiternus, qui unigenitum Filium tuum Dominum nostrum Jesum Christum misisti in terram, qui elegit discipulos suos, eosque vocavit lucem mundi, et misit ad praedicationem evangelii, qui universum orbem illuminaverunt et interfectores nostros malos demones disperserunt, qui postulasti a Filio tuo, ut ad lignum crucis accedat, qui voluisti, ut fons sanguinis stilleret de latere ejus per quem redemptionis mundi facta est.

Լ-ր Բ-իւն Բ-իւն

Domine sancte, Pater omnipotens, aeternus Deus, qui per Jesum Christum filium tuum, Dominum nostrum et per apostolos ejus in hunc mundum lumen tuum claritatis misisti, quique ut mortis nostrae antiquum aboleres chirographum gloriosissimae illum crucis vexillo affigi, ac sanguinem et aquam ex latere illius pro salute generis humani effluere voluisti.

Կը դեննը ընթերցասիրաց հետաքրքրու-
թեան համար հայ բնագրին հանդէպ լա-
տին բնագրին հայերէն թարգմանութիւնն
ալ:

Հ-յ Բ-իւն յե-իւն

Տէր սուրբ, հայր ամե-
նակարող և Աստուած յա-
ւիտեական, որ զմիայն
որդիդ քո, զՏէր մեր Յի-
սուս Քրիստոս, ասացեց
շիրիքի, որ ասացեաց զա-
շակերտս իւր և լոյս ա-
նուանեաց զնոսա աշխար-
հի, որք զամենայն տիե-
զերս լուսաւորեցին և խոր-
տակեցին զարդիւնս, զբա-
ղանոցս մարդկան, որ
ինչդեցեց յորդոյլ քում-
էն ժողովն փայտ խաչին,
որ կամեցար զգլխունս ա-
րեան կաշակել ի կողէն
նորա, որով եղև փրկու-
թիւն մարդկան: Դու զայս
մտորեցեցիր. օրհնես . և
այժմ զժառայս քո... ի
զորք շարնկալութեան,
լուցանել զլոյս ի սուրբ
եկեղեցիս, և անել զգլխի
ի քամակ արեան որդոյլ
քո, և ասլ զմարմնդ
Տեանդ մերոյ Աստուծոյ
յայս սուրբ սեղանս: Տէր
Աստուած լուսաւորեալ զնո-
րէս և զմիտս ժողովնդ
սուրբ յորդոյլդ՝ հաւատով
սպասարեկ ի
քո սուրբ եկեղեցի...

Լ-ր. Բ-իւն հ-յիւն
Բ-իւն Բ-իւն

Տէր սուրբ, հայր ամե-
նակարող, Աստուած յա-
ւիտեական, որ ի ձեռն
Յիսուսի Քրիստոսի որդ-
ւոյ քո, Տեան մերոյ և
ի ձեռն ասարեկոց նորա
զլոյս զայժմութեան
քո ասացեցիր յաշխարհս
յայս, որ և զի ջնկե-
ցես զին ձեռագիր մա-
նուան մերոյ քեհոն
զմա ի դոժո փաստաւորելոյ
խաչի, և զարեւն և զլուր
ի կողէ նորա վան փր-
կութեան մարդկան ազգի
հոսեցեցանել հանցար:

Ձեռագիրը՝ ուսկից օրինակեցինք հայ
բնագրիս՝ կը ղնէ նախակոպոսին աղօթքը
երբ «գաշտանակն յապտերօք տայ ի ձեռն
նորա» «ընկալ գաշտանակ յապտերիս և ու-
նիս իշխանորին լուցանել զլոյս և զկա-
րեղս ի սուրբ եկեղեցիս», և յետոյ «Աս
գծամանոցս զայս ի նկղոյ գլխին ի սկիւն,
փոխանակ արեանն Քրիստոսի» և կը յա-
ւելու ես «Է» միևնի յայս վայր կարէ ա-
մուսնանայ: Էս աստի յասլ ոչ կարէ:

Այս ձեռագիր Մաշտոցը Ձեռագրա-
տան մէջ ունինք դարան Է. գրողգրի՝
գրուած Պէթե թուին Հայոց, որ է 1436
«ձեռամբ սրբաւոր կրօնաւորի և կուսա-
կրօն քահանայի կարապետ գրչի յԱյ-
բարառեան գաւառի ի յերկնահանգէտ
և ի գերահոգակ սուրբ ուխտն Սաղմո-
սավանդ: Արդ ցանկացող եղէ այսմ
«աստուածաշունչ տառի նուաստս յամե-
նայն ի անարգս ի կարգաւորաց Յով-
հաննէս... սպասաւոր և փակակալ սուրբ
և ուխտիս Սանահնոյ և ետու գրել զաս»:
Յիշատակարանին սկիզբը կը ղնէ պատ-
մականս. «Արդ գրեցաւ գիրք ինամաշ-
տոցիս և ձեռնադրութեան գրոցս և քա-
հանայաթողիս ի թուականութեան հայ-
կագեան տումարի Պ և Ձե թուի. ի
դատն և անբարի ժամանակի, ի բռնա-
կալութեան չարին ի յըմեղալի. որում
բազում գաւառք Հայոց աւերեալ և
հալածեալք լինէին, հայրենագուրկ և
տարաշխարհիկ ի կողմանս Վրաց, ապա-
սանեալք ի խնամա բարեպաշտ թագա-
ւորին Ալեքսանդրէ. զոր Տէր Աստուած
ընդ երկայն աւուրս արասցէ զկեանս
և նորա հարազատ որդւոյդ»:

Ո. Կ.

ԻՆՁ Է ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

Երաժշտութիւնը՝ սրտին սէրն է իր կարո-
ղութեան բովանդակ լիութեամբը. ազնուացու-
ցիլ սէրը զգայականութեան, որ կը մարդկայ-
նացնէ վերացեալ բանաստեղծութիւնը: